

ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ ՍԸ 10-ՐԴ ԴԱՐԷՆ

Posted on November 25, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 18 Նոյեմբեր 2021

ՀԻՄԱ ԿԱՍ ԵՐԲԵՔ

(It's Now or Never)


Բագրատունեաց թագաւորութիւնը (885-1045) կարճ ատեն մը մատնուեցաւ ծանր կացութեան: Այդ ատենուան սակաւապետ-օլիգարխ-միապետ- իշխան-աւատապետները բռնած էին կեդրոնախոյս ուղի մը. անոնց համար կարելորդ իրենց սեփական դիրքն ու կալուածները պահպանելն էր ամեն գնով: Ամեն մէկը իր պատճառաբանութիւնը ունէր: Ասոր վրայ աւելցած էին ահաւոր ճնշումները հարաւէն՝ Արաբական խալիֆայութենէն եւ Բիւզանդական դաւադիր ու որձեւեգ կայսրութենէն:

Աշոտ Բ. արքայ (914-929), որուն մեր պատմաբանները տուած են «Երկաթ» մակդիրը, հեռացած էր Սեւանայ կղզիին (*) վրայ գտնուող վանքային համեստ համալիր մը եւ կ'աւաղէր (կը տխրէր, կը ցաւէր) ի տես հայ ազգին առաջնորդներուն սին ու փառամով ծանր կացութեան մատնուած հայութեան վիճակին:

Այս բոլորին վրայ Վասպուրականի Գագիկ Արծրունի իշխանը, որ կը հաւակներ Նոյնապետ թագաւոր դառնալ, արքայական թագ էր ստացեր Արաբական խալիֆայութենէն եւ իր համար Նստավայր դարձուցեր էր Վանն ու Աղթամար կղզին: Ան, իր ազդեցութիւնը տարածելու համար կառուցել տուած էր Նաեւ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին՝ միջնադարու Նշանաւոր ճարտարապետ Մանուէլի հմուտ նախագիծով ու ճարտարապետութեամբ:

Ու տակաւին քանի մը «իշխանիկներ» ալ կային, որոնք կ'ուզէին իրենց «թագաւորութիւնները» հիմնել...Հայ են, չէ՞...ամենէն քիչը կա՛մ կաթողիկոս պետք է ըլլան կա՛մ ալ թագաւոր...

Փաստօրէն Հայաստանը դարձած էր Արաբական եւ Բիւզանդական զօրքերու ասպատակ, ռամիկ ու շինական ժողովուրդը կը վախնար անոնց շուքէն, իսկ իշխանները մտեր էին իրենց բոյները... Մինչ այդ, 885 թուականին կրկին գոյառած հայկական ինքնիշխան պետութիւնը կը թուէր թէ կը խոստանար ամրանալ եւ իրականացնել 5-9-րդ դարերու հայ մատենագիրներու եւ հայրենասէր զօրավարներու երազանքը: Բայց Աշոտ Բ.ի առաջին տարիներու փառաւոր յաղթանակներէն ետք Բագրատունեաց թագաւորութիւնը կրկին կը մատնուէր կարճատեւ անորոշութեան: Հայաստանի գոյութիւնը որպէս ինքնիշխան պետութիւն կը մատնուէր հարցականի ներքին եւ արտաքին պատճառներով: Սակայն շնորհիւ Աշոտի ցուցաբերած կամքին եւ քանի մը նուիրեալ իշխաններու եւ յատկապէս Գեորգ Մարգպետունի զօրավարին եւ իր զաւկին՝ Գոռի զօրակցութեան, ոտքի կը կենայ հայկական բանակը: Երկիրը կարճ ատենուան մէջ կը մաքրեն խալիֆայութեան զօրքերէն՝ խորհրդանշական ներկայութիւն մը տալով միայն անոնց Դուին քաղաքին մէջ:



Այս պատմական անցուդարձերն են որ ներշնչումի աղբիւր ծառայած են վիպագիր Մուրացանին (**) գրելու իր գլուխգործոցը՝ «ԳԵՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ» պատմավեպը:

Այս վեպին մեջ պատմավիպագիրը հերոսացնելով Մարզպետունի զորավարն ու իր որդին՝ Գոռը, ներշնող կերպարներու մակարդակին բարձրացուցած է զանոնք

Այս երկին մեջ, իր յիսուններուն հասած Գառնիի իշխան զորավար Գեորգ Մարզպետունին մատնուած էր շատ մռայլ վիճակի մը, որովհետեւ կը տեսնէր հայրենիքի անմխիթար վիճակը եւ հին երազներու փշրուիլը:

923 թուականի աշունն էր, ուր որ էր պիտի սկսէր Հայկական աշխարհի ծմեռը իսկ զարունը ոչ մէկ յոյս կը ներշնչէր: Աշոտ Բ. արքան յուսահատած էր եւ իր հարիւրեակ մը զօրքով որոշէր էր մեկուսանալ, անդին քիչ մը երկչոտ կաթողիկոսը, սարսափելով ձերբակալուելու վախէն, գաղտնօրէն հեռացեր էր Այրիվանքէն (Գեղարդի վանք)՝ անելի ապահով տեղ մը ապաստանելու համար՝ անհովիւ թողնելով իր հօտը: Օրհասական էր վիճակը:

Գեորգ զորավար ապարդիւն վերադարձեր էր իշխանները համոզելու իր փորձերէն: Ամբողջ գիշեր մը անքուն ու մղձաւանջային ժամեր անցընելէ ետք առեր էր ԿԱՐԵԻՈՐ ՈՐՈՇՈՒՄ մը:

Լուսաբացին ան կը հրամայէ բերդակալին՝ ամրոցի բակը հաւաքել զօրքն ու բնակիչները: Ան պիտի յայտնէր ճակատագրական որոշում մը, որովհետեւ ստրկական, յուսախափ ու ամօթաւար կեանքը սարսափելի մահ մըն էր իրեն համար: Ինք զինուորական բարձրաստիճան մարդ մըն էր եւ տեսած էր Աշոտ Բ.ի վերականգնման ճիգերը: Ահա թէ ինչ կ'ըսէ Գառնիի ամրոցին մէջ հաւաքուած քանի մը հարիւր հայրենակիցներու, որոնց մէջ էր նաեւ իր ընտանիքը՝ կինը, անդրանիկ որդին՝ Գոռը (յետագային իր յաջորդը), զակին հարսնացուն, նաժիշտները, աւագանին, բերդի պահակները, բերդակալը եւ շինականներն ու գիւղացիները:

- ...Ձեզ քաջ յայտնի է թէ ի՞նչ է կատարուում մեր հայրենիքում: Թշնամին իր ուղածի պէս
աւերում է Հայոց երկիրը, բայց ո՛չ մի իշխան չի ուզում զէնք բարձրացնել, այլ ամեն մէկը
իր ամրոցում փակուած սպասում է...Ամօ՛թ մեզ հայեր, ամօ՛թ, ո՛վ զինակիցներ...

Այն ատեն ներկաներուն մեջէն ձայներ կը լսուին.

- Ի՞նչ անենք մենք, ի՞նչ կարող ենք անել..., ի՞նչ կարող է անել հարիւր զինուոր
ունեցողը:

- Ո՛չ մի զինուոր, եթէ նա իրօք զինուոր է, չպետք է սպասի ընկերոջը, երբ Հայրենիքը
վտանգի մէջ է,- կը դիմէ անոնց,- կամենօ՞ւմ էք կեանք վայելել, բարի՛, էլ ինչո՞ւ սուր էք
կրում, ինչո՞ւ էք անպատուում սուրն ու երկաթը, գնացէք եւ ամիրաների դռներից
մուրացիկի պէս կեանք խնդրեցէք... Ոմանք ասում են “մի ձեռը ծափ չի տայ, մի ծաղկով
գարուն չի գայ”, այս խօսքերը ես կրկնում եմ արեղացուներին, որոնք սխալմամբ
զինուորական են դարձել: Այժմ ես կամենում եմ ապացուցել, որ նրանք չարաչար
սխալում են:

Ապա իշխանը սուրը կը հանէ եւ քայլ մը առաջ գալով կը գոչէ.

- Ահա ես միայնակ գնում եմ հազարացուց (Արար խալիֆայութիւն) դեմ, ո՞վ է այն քաջը,
որ կամենում է միանալ ինձ, թող առաջ գայ:

Քանի մը երկվայրկեան ետք.

- Ե՛ս, հայր իմ,- որոտածայն գը գոչէ որդին՝ Գոռը

- Ե՛ս, տեր Մարգպետունի,- կ'երկրորդէ Վահրամ սեպուհը:

- Եւ ե՛ս, տէ՛ր իմ...եւ մե՛նք...մե՛նք էլ,- կը միանան ռազմիկները:

Եւ այսպէս քսան հոգիով կ'անցնին գործի: Ճարպիկութեամբ կը վերագրաւեն մօտակայ
պզտիկ ամրոց մը: Կը միանան սսկուած շինականները: Լուրը կը հասնի հարեւան
գիւղերուն եւ պահուըտածներ դուրս կու գան թաքստոցներէն, հեռացած զինուորները
կը միանան, կը խանդավառուին այլ իշխանիկներ եւ փոքրիկ զօրքը կ'իջնէ
Արարատեան դաշտ...Քսան հոգիով սկսած ջոկատը կը դառնայ երկու հազար, չորս
հազար...Աշոտ թագաւորին կը հասնին լուրերը. ան նոյնպէս կը միանայ գունդին ու
կ'առաջնորդէ զայն:

Գարնան վերջաւորութեան Աշոտ գրեթէ վերականգներ էր իր հեղինակութիւնը: Եւ
այսպէս ՕՏԱՐ ԶՕՐՔԵՐԸ դուրս կը շարտուին մեր հայրենիքէն եւ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԻ
ՀԱՆԴԵՊ ԱԻԵԼԻ ՅԱՐԳԱՆՔՈՎ կը սկսին վարուիլ մեր դրացիները...

Պատմական հիմքի վրայ յօրինուած այս վէպը, ինչպէս Րաֆֆիի եւ Ծերենցի
պատմական երկերը (19-րդ դար) կը խանդավառեն մեր ազգի երիտասարդները եւ
անոնք կը լծուին ազատագրական պայքարի. եթէ այդ պայքարը իր յաջող աւարտին

չհասաւ, ապա պէտք է մեղադրել ոչ միայն կայսրութիւններու (Բրիտանական, Օսմանեան, Յարական) յափշտողական քաղաքականութիւնը, այլև մեր քաղաքական մտքի տհասութիւնը, անժանակ ցոյց տրուած տաքարիւնութիւնն ու ոչ խելամիտ արարքները – արկածախնդրութիւնները, իսկ այս օրերուն սարսափելի պարտուողականութիւնն ու ստրկամութիւնը:

Պէտք կա՞յ զուգահեռներ անցընելու 11 դար կամ 120 տարի առաջ կատարուած պատմական այս դէպքերու եւ այսօրուան դառն իրականութեան միջեւ...

(*) Մինչեւ 70 տարի առաջ կղզի էր:

(**) Գրիգոր Տէր Յովհաննիսեան (1854-1896), ծն. Շուշի, Արցախ

Աղբիւրներ

Յովհաննէս Դրասխանակերտցի, «Պատմութիւն Հայոց»

Մ. Չամչեան, «Պատմութիւն Հայոց», հտ. 2, Վենետիկ, 1785

Մուրացան, «Գեորգ Մարգպետունի», պատմավէպ

Նոյնի պարզեցումը եւ համառօտումը Մ.Գ.ի, 98 էջ, Պէյրուզ, 1986

There are no comments yet.